Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՍԻԱՄԱՆԹՈ

# ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Դարերու վրէժ
Փառք տեսքեկիչներուն
Կռվկան
Մենամարտութիւն
Աստիպուքեան կոչ

Հրատ.
„ԴՐՕՇԱԿԻ“

ԺԸՆԵՎ
1906

891.99
Ս-47

«Հայորդիներու» առաջին շարքը, ուրիշ հինգ քերթուածներէ բաղկացեալ, հիդինակին կողմէն հրատարակուած է 1905 թուին, այժմ սպառած։

81
-47

12 MAR 2011

ՍԻԱՄԱՆԹՕ

# ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Դարերու վրէժ
Փառք տեսքեկիչներուն
Կովկաս
Մենախօսութիւն
Աստղուքեան կոյս

ՏՊԱՐԱՆ
Հ. Ե. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԹԷՐԵՎ
1906

30 JUL 2013

54976

Հայորդիներու այս շարքը, սքանչացումով՝ Դաշնակցութեան տասնևվեցամեակին կը ձօնեմ, իր թռփած Արիունին, իր Նահատակներու փառքին, իր Գաղափարի գեղեցկութեանը, իր Կամքի ուժին, իր վաղուան և Պայքարին և Յաղթանակին համար՝

Իմ բոլոր նոգիովս

ՍԻՍՄԱՆԹՈ

---

ՀԱՅԿԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Ա ԺԱ.ՀՍՀ
Ц. им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2232-90

# ԴԱՐԵՐՈՒ ՎՐԷԺ

## Ա.

ՅՈՅՍԵՐՈՒ երկաթէ սանդուխին կատարներէն
է որ Աւետիսս կ'արձակեմ,
Մոխիրներու, դիակներու և վշտերու հովիտներէն
է որ հասայ ի քեզ,
Եւ, աւա՜ղ, քզամիգիս թեզանիքներէն իմ շքեղ ցե-
ղիս արիւնը ահաւասի՛կ դեռ կը թորայ...
Բայց քայլերս անխոնջ են և կամքս գերազօր և
ձայնս դաժանօրէն ամեհի...
Գլուխս սուգերէն և վրէժէն և ճակատագրէն թէև
ալեհեր,
Բայց, տե՛ս, աչքերս դիւցազնի մը աչքերուն չափ
կարմիր և կերպարանքս է սոսկատեսիլ։
Իմաստութեանս և ցասումիս արեգակին տակ իմ
հուժկու իրանս անկիւնաքար,
Այլևս չուզեր այդ սնոտի փառքը յաւերժօրէն իր
վրայ կրել։
Եւ պաղատանքի, ազօթքի, լաց ու կոծի և ողբի
այն մատեաններուն մէջ,

Որ դար առ դար իմ սերունդներս իրենց արիւնը և տառապանքն են լացեր,

Մէկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենէ ստրկացում և աղաչանքէ արցունք չերթալու համար...

Եւ մտածումովս և զայրոյթովս ձեր ցաւերուն ամենախոր արմատները չափեցի.

Տեսայ որ ձեր փրկութիւն մուրացողի բոլիկ ոտքերն աւերակներու մոխիրներէն այրեցան...

Տեսայ որ դուք արցունքին մէջ երջանիկ էիք և կենսաբեր կռիւին դէմ ահաբեկ...

Տեսայ որ արդարութիւնը ստեղծել պէտք էր և ազատութիւնը մշեգնաբար յափշտակել:

Եւ այսօր, ահաւասի՛կ, իմ անկշռելի բարկութիւնս իր բոլոր հուրերը վառեց...

„Ահա՛ քեզ ալ կը դիմեմ, եկո՛ւ և ճամբուս վրայ ոտքի՝ երգէ՛ որ արձակե՛մ,

Ճամբուս վրայ ռազմերգէ՛ որ քինայոյզերէն և առյաւէտ արձակե՛մ

Իմ հաւատքի գաւակներուս վայրենալանջ երիվարները փոթորկապար...

Ըսէ՛, որ գաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն դիմաց,

Ըսէ՛, որ թաւալե՛մ ապառաժներուս կոյտերը անիրաւութեան կուրծքերուն,

Եւ ոտքի հանեմ հողիս հրեղէն և ըմբոստ մարտիկներուն հետ,



Քինախնդրութեան և սարսափի բանակներուս արշաւանքն ալ ահեղաշար...

Ըսէ՛, որ շեփորներս հինաւուց հերոսներու հագագովը շեփորել տամ...

Ըսէ՛, որ երկաթներս կռանեմ և պողպատներս շողացնեմ,

Ըսէ՛, որ ես ալ իմ արիւնախում նժոյգս շքեղօրէն թամքեմ,

Ըսէ՛, որ անոր սմբակները ձորերէն վեր՝ լեռնէ ի լեռ միայն կոչեն...

Երգէ՛, ահա, բոլորին արիւնը արև է դարձեր և կամքերն ու դաստակներն է պղնձուեր,

Երգէ՛, Եղբայրութիւնը տօնուեցաւ և շունչերն ու հոգիները նոյն դարերու վրէժովը պսակուեցան...

Ահա՛ թափուող արցունքները յի՛տ դարձան և կուրծքերու կոծումը դադրեցաւ,

Ահա՛ բոլորը մէ՛կ, բոլորը մէ՛կ, իմ Գերիշխանի թևերուս տակ յառաջացան.

Արբեցո՛ւր զանոնք դեռ, եթէ կրնաս, և արժանապար դիւցազներգէ՛ զիս ո՞վ քնարաւոր,

Ես գիտեմ որ քու տաւիղդ Հայրենիքին ծարաւն ունի ինչպէս վրէժն այնքա՞ն դարերու...

Ուրեմն լարերդ զենիթին շանթերէն յափշտակէ, տրցակ առ տրցակ,

Բարձրացո՛ւր ձեռքերդ և զանոնք գիշերուան կապոյտներու կամարին կարկառէ՛,

Եւ փառազարդէ գլուխս առաւօտեան աստղերու
բոյլով մը լուսածոր,
Խնկարկէ՛ գիս և անմահութեան տաճարներուն էն
փառակերտը կառուցո՛ւր,
Ծնրադրէ՛ և պաշտէ՛ զի՛ս՝ և երբ ժամը հասնի
ողջակիզուէ՛ ինձի համար,
Եւ փշրէ՛ քու հողեղէնի ճակատդ իմ կոթողիս
մարմարներուն դիմաց,
Որովհետև, Ես ե՛մ, Ես եմ, Ես ե՛մ, իմ՝ անունս է
Պայքար և վախճանս Յաղթանակ»։

# ՓԱՌՔ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ

## Բ.

ԵՒ ԱՅՍՊԷՍ, ձեր արդարակշիռ և երկաթեղէն ձեռքերն անպարտելի,
Ձեր զինավառ ու կրակոտ կուրծքերէն կատաղաբար մեկնելով՝
Դաւադրութիւնն ու ՈՃիրը անողոմ հարուածով մը դէպի հողը կը մխրճեն...
Ո՜հ, ի՞նչպէս մոտենալ ձեր Սարսափին, ի՞նչպէս երգել, ի՞նչպէս ջատագովել, ի՞նչպէս շեփորել զձեզ,
Դուք ինքնիշխան և գերագոյն դատաւորներդ բոլոր արիւնբերան բռնապետներուն...
Ու նոյնիսկ չեմ գիտեր ձեր զարհուրանքի և պակուցումի անուններն ահաւոր,
Որովհետև ձեր յաղթական անցքը ճշմարտապետութեան ճամբուն վրայէն,
Այնչա՛փ արագ է, այնչա՛փ խորտակիչ, այնչա՛փ կուրցնող և այնչա՛փ աւերիչ

Որչա՛փ անցքը խաւարակուռ անտառները մոխրացնող վայրկեանական կայծակներուն...

Դուք մեր տառապանքին և մեր կռիւին երկարատև տարիներէն ի վեր,

Անուաճելի պարիսպները հանդիսացաք մեր քայլերը կոտրող բոլոր թշնամիներուն հանդէպ՝

Եւ բռնակալութեան քաղաքներուն և անոնց հրապարակներուն վրայ,

Երբ մեր դիակը փողոտուելէն մեր տաք արիւնը կը հոտոտուէր...

Ահաւասի՛կ որ ձեր խրոխտ հասակները միսմինակ և հերոսաբար աշտարակուեցան...

Ձեր քայլերը մեռելապատ փողոցներուն մէջ վրէժին աղաղակը գոռացուցին,

Ձեր սուրերուն հալածանքէն բոլոր դաւաճանները եղբայրադաւներուն հետ գերեզմանուեցան

Ու ձեր ճակատ ճակատի և անվեհեր ու անվախ ու հպարտ երևումէն,

Ծնրադիր խուժանը վատերուն՝ ձեր ոտքերուն կառչելով իրենց կեանքը հայցեցին...

Ու դեռ երէկ, ձեր ահաբեկչի ռումբերը մարդասպաններու թափօրներ մոխրացուցին...

Բարբարոսներու այդ խելացնոր վոհմակներուն մէջ վար թաւալող արեգակներու նման պայթելով...

Այսպէս, ձեր արդարախոյզի արիւնասևեռ լապտերները ձեր ձեռքերէն առկախ,



Բոլոր խաւարչտին և եղեռնական հոգիներուն գոցուած դուռներէն ներս խուժեցիք,

Ինչպէս խղճմտանքը, որուն ճշմարտագէտ նայուածքը վախճան մը չունի միանգամայն...

Դուք Օրէնքը եղաք եղեռնապաշտ Չարիքին ուսերուն վրայ հսկող,

Եւ հայրենի ամեն յուզում, ամեն խռովք, ամեն հեռ ու ամեն վրէժ,

Ձեր նժարին մէջ կշռուեցաւ և ձեր արդարասպաս ատեանին սեղանին վրայ յայտնուեցաւ...

Դուք ո՛չ զինակիցներ ունեցաք և ո՛չ ձեր հաւատքին վրայ իշխողներ,

Դուք,—դուք ձեր անձն էիք անսահմանօրէն և ձեր արիութիւն հոգին,

Ձեր Եսը գերագոյն-մարդուն եսն է ամեն զօրութենէն գերիվեր,

Ձեր վճիռը ամեն վճռի մահավճիռն է անողոք,

Եւ վա՜յ անոնց, որոնք ձեր կարմիր և մահացու կնիքովը կը խարանուին...

Եւ մինչև այսօր մեր բոլոր թշնամիները տեսան որ ձեր վրէժաձայնը գարհուրաբերի,

Արդարութեան ձայնն էր աստուածագոչ՝ ինչպէս ձայնը Ազատութեան,

Տեսա՛ն որ ձեր անխնայ սուրը, սուրն էր անխուսափելի ճակատագրին,

Տեսա՛ն որ ձեր դաշոյնները, մեղապարտ վիզերու ի խնդիր, նորէն կը շողան,

Տեսա՞ն որ ձեզ բռունցքին հարուածներուն տակ մատնիչներուն կղակները կը կափկափեն...

Տեսա՞ն որ ձեր կապարէ գնդակները մարմինէ մարմինէ և ուղեղէ ուղեղ կ'անցնին...

Տեսա՞ն որ իրենց ծոծրակներէն և սրտերէն, մեր ծարաւի աչքերուն առջև, իրենց արիւնն է որ կը ժայթքի,

Հեղեղօրէն, հեղեղօրէն, իրենց հեռաւոր գահակալներն ու մահադէմ թագակիրները թըրջելով...

Տեսա՞ն որ իրենց ոսկորները կը ջախջախուին և իրենց ողնաշարները կը սղոցուին,

Տեսա՞ն որ այն գլուխները որ գիշերներով մեր ցեղին անէացումը յղացան,

Տեսա՞ն որ ձեր պղինձէ կրունկներուն զօրութեանը տակ է որ կը խմորուին...

Տեսա՞ն որ այսպէս, քաղաքէ քաղաք և հրապարակէ հրապարակ,

Ձեր յանկարծական երևումը, ձեր բաղկհարուածը և ձեր յարուցած խռովքն անմեկին,

Բոլոր գաւաճանները դիակնացուց, բոլոր Վասակները հողեց և մարդակեր ամբոխները քարացուց...

Բայց դեռ մա՛հ պէտք է որոտանք, մա՛հ պէտք է համասփռենք, մա՛հ պէտք է մրրկենք,

Այն ատելութեան և ամբարշտութեան չարաշուք պալատներուն վրայ,

Որոնց գանգուածներուն տակ իբր հիմնաքար մեր



ցեղին մտածումը և մարմինը և հոգին է որ կը հևայ...

Որոնց օրմերը մեր արիւնովն է շաղախուած և մեր ոսկորներովը կառուցուած...

Որոնց աղբիւրները մեր անօգուտ արցունքներէն են առատ,

Եւ գինովութեան ու եղեռնի բաժակները, ձեռքէ ձեռք շրջող, մեր արիւնովն առլցուած...

Մահ պէտք է համասփռենք հոն, ուր մեր սարուկի ծնրադիր պաղատանքները չի հասան.

Բայց ուր ձեր սուրերուն բոցը մարդասպանները սառեցուց և անոնց ակռաները գահանդանքէ կրճտել տուաւ...

Մա՛հ այդ թագակիր, բայց արդէն ահաբեկեալ և կիսամեռ գահճապետներուն,

Վասն զի, իրենք, այդ արիւնկղակ և գիւահար բռնաւորները վախճանաւոր,

Զարհուրանքով լսեցին ձեր ձայնը, ձեր բարկութիւնը, ձեր ցասումը, ձեր զայրութեան ահաւոր...

Եւ իրենց խորտակեալ և դագաղակերպ գահերը շարժեցան,

Ուժանակներու գոռումէն, ինչպէս գոռումէն փրկարար ռումբերուն,

Ձեր վերահաս երևումը իրենց սրտերը կը մահաղանգէ և իրենց ոճրագործի ուղեղները կ'արիւնէ,

Իրենց կմախաձև ձեռքերը այլևս մահուան սարսուռովն է որ կը դողդոջեն...

Իրենց գիշերասարսափ երազներուն մէջ ձեր անձը իր երկաթէ քինայոյզ քայլերովն է որ կ'արշաւէ...

Եւ ահաւասիկ իրենց դարաւոր դուռները ահագնաբար պատէ ի պատ կը ծեծուին,

Եւ ահաւասիկ իրենց պատուհաններուն բոլոր փեղկերը յառաջացող վտանգէն իրենց վրայ ահեղութեամբ մը փակուելով՝

Դուրսէն եկող ամեն յոյս կը չքանայ իրենց համար և խաւարին մէջ Մահն է որ անոնց հոգիէն ի վեր կը կառչի...

Ուրեմն ոտքի՛, նորէն ոտքի՛, նորէն ոտքի՛, Հայորդիներ՛ը, Դիւցազուններ՛ը, Ազատաբերներ՛ը,

Ոտքի՛, և օդերուն մէջ թո՛ղ ցնդի օդերուն մէջ թո՛ղ մոխրանայ

Մեր Դահիճին սա՛ պատժապարտ պալատ՝ Եբլոտզ-Քէօշքն՝ արիւնաթոր...

---

# ԿՈՎԿԱՍ

## Գ.

Ի՞ՆՉ ՈՍԿԵՂԷՆ դարագլուխ է այս, և շղթաներու ի՞նչ գայրագին փշրտում.

Ի՞նչ ընդհարում ճակատ ճակատի, և հաւատքի ի՞նչ յաղթանակ.

Ի՞նչ երկաթակուռ հարուած բռնապետութեան անխախտելի օրէնքներուն.

Ի՞նչ արիւնի հեղհեղում քեզ անարժան թշնամիդ վայրագ շաքերէն

Եւ գիակի ու բացուած լանջքերու ի՞նչ արգարացի մեռելակոյտ,

Մեր բոլորին վրիժածարաւ աչուքներուն առջև...

Կովկա՜ս, յաղթականօրէն գուն եղար, որ յայտնութիւններուն գերագոյնը ըրիր.

Քու բազուկներուդ հուրին մէջն էր գետնահարող զօրութիւնը ցեղին,

Քու մտածումիդ մէջն էր, որ ծնաւ կարմիր արևը յասահատեալ ցաղթութեան,

Քու արիւնիդ մէջն էր, որ վառեցաւ ճշմարիտ արիւնը երազուած Ընդվզումին.

Եւ այսպէս իրիկուն մը քու զինավառ ձեռքերդ
ազատութեան աստղերուն նիզակուեցան
Թշնամի երկինքներուն չարիքի կամարներէն կորզելու
Քիչ մը լոյս, քիչ մը կեանք, քիչ մը սէր և քիչ
մը երազ
Քու խռովեալ սերունդիդ և ի քեզ ակնդէտ ու
տառապող եղբայրներուդ համար։

Օ՜, փառք քեզի, և փառք շանթամարտ հպարտու-
թեանը քու լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն յաւիտենական տար-
բերէն են կառուցուած՝
Անպարտելի հասակները քու սեահեր ու հրաչուի
որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գի-
շերական
Անոնց գինուորեալի կուրծքերուն մէջ իր հսկայա-
կան հեքը դրաւ.
Քու հովիտներդ Անոնց քայլերուն առջև Յոյսին
ճամբաներուն պէս կանանչցան...
Եւ քու հողմերդ Անոնց շունչին մէջէն փրկութեան
ծամը շեփորեցին։
Քու ծոցիդ մէջն է, քու սրտիդ վրան է, քու արե-
գակիդ տակն է
Եւ հարազատ և անպարտելի և անվեհեր գան-
գուածը մեր հինաւուրց Ազգին,
Մեր նեմմացեալ ճակատները այդտեղ էր որ վեր-
ջապէս իրենց մութէն պայծառացան,



Այդտե՛ղ էր, որ որ սկսաւ պայքարի սուրերուն
ամենէն արդարը շողալ,
Այդտե՛ղ էր, որ ժողովուրդը իր իրաւունքը իր
կռուփովը պահանջեց,
Այդտե՛ղ էր, որ Ան չի լացաւ, չի ծնրադրեց և իր
գլուխը հողին չի հասաւ,
Այդտե՛ղ էր, որ կատաղութեամբ գարկաւ և հպար-
տօրէն գարնուեցաւ,
Այդտե՛ղ էր, որ արդարութիւն որոտացողի իր ճա-
կատը փառակերտ՝
Արևմուտքի աշխարհներուն դիմաց ջահերու պէս
ցոլացուց,
Այդտե՛ղ էր, որ իր անէծքի և պժգանքի թուքը
թագակրին նետեց,
Եւ այդտե՛ղ էր, որ վերջապէս Անիրաւութիւնը օր
մը ամենահար պարտուեցաւ,
Եւ քեզի համար, այդտե՛ղ է, որ այսուհետև կո-
թողները փառքին,
Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը պի-
պի բարձրանան...

Զա՛րկ, կովկա՜ս, աւերակեալ ու արցունքոտ Հայաս-
նին աչքերը քեզի կը նային.
Ան գիտէ, որ քու թշնամիդ ատելութիւնը իր
թշնամիներէն է որ կը բղխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովե-
բուն հետ եկաւ ճամբաներդ սգաւորելու

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ Ա Ակ.ՀՍՀ
Ա. Մ. Մ. Մ. Մ. Մ.
Ա. ՄՇԱՆԻՍՅԱՆ ԱՆՎԱՆ

Երբ իր արիւնը եկաւ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտրտած բազուկը քու կարիճի ձեռքերուդ ի խնդիր քեզի զողդոչեցաւ,
Թշնամին նոյնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի բազուկէն զարհուրած՝
Կուզէ զայն ջախջախել, կարենալ տօնելու համար վերջնական մահացումը մեր Ցեղին...
Ուրեմն, զա՛րկ, կովկա՜ս, թէև գիտեմ որ քու ասպետական ձեռքերուդ հարուածին անարժան է ան,
Զա՛րկ, թէև գիտեմ որ քու սուրիդ վեհութիւնը պէտք չէ՛ր արատաւորել,
Այդ անբաններու խուժանին թունաւոր ու պժգալից արիւնէն...
Զա՛րկ, թէև գիտեմ որ հերոսները հերոսներու միա՛յն կրնան ընդհարուիլ,
Զա՛րկ, սա անարգ ճակատագիրը ջախջախելու և Զարիքն ըմբերանալու համար,
Զա՛րկ, որովհետև ամե՛ն Յոյս գՔեզ կը յուսայ և ամեն Ապագայ գՔեզ կը պաղատի,
Զա՛րկ, վասնզի ամեն Ազատութիւն ու ամեն Արև քու հարուածիդ կայծերէն պիտի ծնանին.
Զա՛րկ, Քու անթառամ սիրոյդ և ատելութեանդ չափին խորութեանը համեմատ.
Զա՛րկ, զա՛րկ, ահաւասիկ հորիզոնները կը կապոյտնան, ահաւասիկ Առաւօտները կը ճեղքուին,
Զա՛րկ, ազատաբեր հարուածիդ շունդը Մասիսէն Տաւրոս և մինչև Հայրենիքին խորերը կը թնդայ։

# ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

## Դ.

ԵՒ ՍՏՈՒԵՐ մը ընդերկար մենախօսեց գիշերուան ժամերուն մէջ կանգուն՝
Զայնը զողդոչ էր, սիրտը սիրով լեցուն, ոտուքները մոխրապատ և ինք իր գաղափարէն գեղեցիկ՝
Նայուածքներէն և արցունք կը հոսէր և կայծեր կ՚արձակուէին և հոգին շքեղօրէն Ցեղին հոգին էր,
Եւ այսօր կուգէր իր տառապանքին և զոհը ըլլալ և իր խեղալին հերոսը միանգամայն...

„Հայրենիքիս վրէժին խօսքերը և տառապանքիս տարիները ուղեղիս մէջ՝
Քաղցի և քաղցի, յոգնած, ըմբոստ, ճշմարտախնդիր և մինակ,
Արիւնի քաղաքներէն ուրիշ քաղաքներ և գիւղերէ ի գիւղ...

Զայն չի կար։ Մեռելութիւն ամենուրեք և աւերակներ լեռնակուտակ,

Ամէն երդիք իր տնուորին վրայ կործանուած՝ և ամէն աղբիւր իր երջանիկ երգին...

Արօտավայրեր արիւնով ողողուած՝ և հնձաններ գերեզմանոցներու նման,

Ճամբաներուն վրայ որբերու լաց ու կոծ՝ և այրիներ՝ և դառնագէմ յուսահատներ,

Անագորոյն օրէնքին դէմ ըմբոստներ՝ և ջախջախուած նորածիններ գետեզերքի քարերուն դէմ...

Արդարութիւն պաղատողներ՝ և ուրիշներ որ տակաւին խաչափայտերու կը փաթթուին...

Դիակներ և դիակներ որոնց գլուխները միայն մոխիրներէն դուրս է ցցուած՝

Հունձքերուն վրայ դիակներ, աւազաններուն երեսը և դիակներ իմ սարսափահար ոտքերուս տակ...

Շղթայակապներ բանտին դուռներուն քով և մեռելներ յամառող պատերուն դէմ կանգուն...

Կիսամեռներու ձեռքեր՝ գետ կեանքին արեգակը դառնութեամբ աղերսող,

Ուրիշներ որ կուգէին գետ ապրիլ մահուան ճանապարհէն ալ անդին...

Եւ ուրիշներ սիրուած հողին համար անգամ մըն ալ իրենց արցունքը վար կուլային"...

„Ով անեղութիւն դիակներու, ի՞նչ չափով քեզ կրնայի չափել,



Արիւն է որ կը բուրէ և ես թափառականս, արիւն է որ կը շնչեմ...

Եւ ոտքերս տխրաքայլ, ո՞ր ժամանակէն ի վեր, կարմիր հողին կը կպչին...

Մարդ չէ ծնած այստեղ կարծես և ոչ ալ մարդ է մեռած՝

Այլ չարաշուք բնութիւնն է որ իր կողէն դիակներ է դուրս նետեր...

Եւ երկինքը իր աստղերէն վար իր արիւնն է որ մեր բոլորին վրայ կը տարափէ...

Տասը տարուան ճանապարհ՞ը, ո՞ւր եմ այսօր, ո՞ւր է ճամբաս,

Ո՞ւր է սուրս, ո՞ւր վերարկուս, ո՞ւր է լապտերն իմ սարսափի...

Նպատակս պարտուեցա՞ւ թէ արժանի չեմ անոր Խօսքին...

Ի՞նչ կնճիռ է այս կնճիռը որ ճակատիս վրան ակօսուեցաւ,

Խղճի խա՞յթն է որ փորեց զայն թէ ժամանակն բռնակալ...

Ո՞ւր են այն փարոսները որոնց լոյսերէն գինովնալով հասայ եկայ,

Ե՞րբ մարեցան։ Ո՛չ, դեռ կը վառին, յառաջացի՛ր, դեռ կը վառին,

Ըսին ինծի։ Ջուրի ձայն մը, կը ճանչնամ քեզ սարսափահար Եփրատն ես դուն,

Ահաւասի՛կ վանայ ծովը։— Յառաջացի՛ր, ըսին ինծի, Արարատէն ալ անդին"...

„Ատելութիւն, ատելութիւն, վերջապէս քու Փոթորկիդ թափն իմացայ...

Ահաւասի՛կ կեանքի ձայներ, պայքարի փայլ և գիակներ օդերուն մէջ...

Ահաւասի՛կ կռուին շեփորը, ո՞վ Մասիս, որ աջ ծագէդ կ'արձագանգուի...

Բղքտէ՛ ուրեմն պատանքներդ անցեալներու սուգերուն մէջ բաժանելէն,

Եւ թո՛ղ գլխէդ անցնող ամպերն՝ աչքերուդ արիւնը ցամքեցնե՛ն...

Նոյն ցեղն է՛ որ ոտքի ելաւ, նոյն ցեղն է՛ որ կը զարնէ՛, նոյն ցեղն է որ այսօր կ'ապրի,

Եւ ի՞նչ նախձիր, ի՞նչ սրածուա՛մ, ի՞նչ յաղթական ճակատամարտ...

Ի՞նչ պաղատանք, ի՞նչ քաւութիւն թշնամիին անանձնական խաժամուժէն...

Եւ եղբայրներս են որ կը ձայնեն։ „Գթութիւնը մենք չե՛նք ճանչնար, միայն վրէժն է ճըշմարիտ“։

Չեղի՞ փառքը, ձե՞զ ապագան, ձե՞զ պատմութիւնը ոսկետառ,

Տասը տարուան արիւն ունի՛նք մեր ցաւին քով ծովատարած,

Եւ այսօր է՛ որ սրբեցինք մեր ճակատին մուրն ամբարտաւան,

Արշալոյսներ պիտի ծնին, ծաղկաստա՜ններ, ձեր ճակատները պսակող...



Եւ Հայրենիքն ահաւասի՛կ ձեզի զրկեց իր չորս ծայրէն իր զաւակները գինավառ,

Հարուածեցէ՛ք, հարուածեցէ՛ք, մինչև որ Արդարութիւնը ձեզ բոլորդ համբուրէ“...

„Ո՞վ էք դուք որ այս գիշեր կ'ունկնդրէք մենախօսիս վշտերուն,

Մտածումիս մէջ իմ ամօթէս ես սկսայ կատաղութեամբ արտասուել...

Ո՞ւր կ'արշաւէ՛ք, ո՞վ էք դուք, եղբա՞յր, ընկե՞ր, թէ գինակի՞ց,

Օ՜, ես ալ ճանչցայ Տառապանքը, ո՞ւր կ'արշաւէք, գիս ալ առէ՛ք, գիս ալ տարէ՛ք ձեզի հետ“...

# ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ԿՈՉ

## Ե.

ԴԱՌՆԱՊԷՍ կուլար մենախօսը, իր սուրը, իր
ճակատը և իր մենութիւնը հողին հակած՝
Աղիտաւորօրէն կուլար տառապանքի և պայքարի
ճակատագիրներն իր հայրենի երկու հողերուն,
Երբ հսկայատեսիլ մէկը, ծանրօրէն զինեալ, իր
հրաշող խումբերէն անջատուելով,
Քայլը դղրդող, ձայնը բարբարոս, շունչը անսպառ,
և քաղցրութեամբ ըսաւ իրեն...

„Արցունքներուդ շիթերը և սարսափդ և հառաչանքներդ գետնէն վե՛ր բարձրացուր
Ո՞վ հեռաւոր, ո՞վ տանջուած ո՞վ հայրենառաք և խմաստուն եղբայր,
Եւ ոտքի կեցիր հասակիս քով, որպէս զի հոգիիդ վէրքերը մտածումովս հայրօրէն քրքրեմ...
Գիշերուան կապոյտին մէջէն մենախօսիդ հեծեծանքները ես դառնութեամբ խմացայ,
Եւ կը տեսնեմ որ քու մէջդ, տարիները, տառապանքի և պայքարի ապառաժներ են ծնուցեր.
Սրբէ՛ աչուքներդ, եղբայր, և ոտքերուդ մոխիրը թօթափէ, և սուրդ ամենօրէն բարձրացուր,
Ու յառաջացի՛ր, որպէս զի բոլորս ալ հայրենիքին Արիւնը քու ճակտիդ վրայէն համբուրենք...
Որովհետև դուն մե՛րն ես այսուհետև, ինչպէս քուկդ են և մեր դրօշը և մեր ճամբան...

„Եւ երգերովդ կրկնէ մեզի ինչ որ Հայաստանի մեռելակոծ հողմերը քեզի պատմեցին)
Երգէ՛ արցունքներու հովիտին, յուսահատ քաղաքներուն և ջախջախուած ժողովուրդին համար,
Երգէ՛ և Եղբայրութեան հրաւէրդ և քու կարմիր Կոչդ Ազատութեան,
Աղաղակէ՛ և մեռելներուն և ընկճուածներուն և վրէժին և դեռ քնած գօրութիւններուն
Ջատագովէ գանոնք, որոնք յառաջ են անցեր, և փնտռէ գանոնք, որոնք անստոյգ մութին մէջ կը խղդուին...
Երգէ՛ Նոյնիսկ անոնք, որ պարտուեցան, անոնք, որ մեռան և անոնք, որ պիտի ծնին,
Փառաբանէ՛ և Ռոհվիրան, և Ջահակիրը, և Զինուորը, և Քարոզիչը և Մարգարէն,
Եւ խարազանէ՛ անգթօրէն բոլոր հայրենադրուժները և դատաճանները, եթէ դեռ կապրին...:

„Հողին խորերէն ես այստեղ հասած, և շունչդ յեշատակին և անցեալին բուրմունքն ունի,

Օ՜ աչքերուդ մէջ հարիւր հազար զոհերու հոգեալ-
քին խենթեցնող մահանկարը կ'ընդնշմարեմ...
Ըսէ՛ անոնց գալարումը, անոնց հոգեդարձը, անոնց
մեռեալի քրքիջը և կտակը զոր քեզ ըրին,
Ըսէ՛ անոնց դիակներուն մարձումը հողին մէջ,
քաղաք առ քաղաք, առա՛նց դագաղի և առանց
պատանքի...:
Ռազմակոչէ՛ բոլոր անոնք, որոնց մէջ դեռ Յոյսը
իր մարմարէ թևերը չէ բացեր,
Հրահրէ այն բոլորը, որոնք ցեղին այս արիաթև
վերածնումը կ'անգիտանան,
Եւ թշնամին զարհուրեցո՛ւր, և մեր աչքերուն մէ-
ջէն տե՛ս պայծառութիւնը մեր Նպատակին,
Եւ այս բոլորէն յետոյ յառաջացի՛ր, փառքին շըր-
թունքները քե՛զ ալ կուգեն համբուրել"...

Ոտքի էր մարտախումբերուն քով, իր անդրիակերպ
հասակովը բոլորովին սարսռուն...
Նայուածքին մէջ ցողեր կային երջանկութեան և
դէմքին վրայ ժպիտ մը անպատմելի,
Վանդի տեսած էր, որ իր սիրտը հազարաւոր կուրծ-
քերու տակ նոյն վրէժը կ'որոտար,
Եւ խօսեցաւ վարդագոյն այգին մէջ և երէկի ուխ-
տանուէր Դագաղներուն դիմաց...

„Յարութի՜ւն ձեզ մեռեալներ, յարութի՜ւն ձեզ պար-
տուածներ, յարութի՜ւն ձեզ յուսահատներ,



Եւ դուք անցեալի արեգակներ որ մեր դարերու
արիւնը ձեր վերջալոյսներովը խմեցիք...
Գերեզմաններոցներ որոնց մէջ մեր ահագնադէզ մեռել-
ները մինչև այսօր դեռ զիրար կը ջախջախեն...
Եւ դուն, օ՜վ մխիթարներու և մարտիրոսութեան ան-
ծայրածիր և մոռացեալ հայրենավայր,
Ո՜վ Հայրենիք, օ՜վ սքողեալ Յոյս, օ՜վ երկաթակամ
Սպասում, օ՜վ Ապագայ,
Եւ դուք, հեռաւորներ, ապերախտներ, տարագիր-
ներ, մոլորեալներ, գայրացկոտներ,
Ձեզի ե՛մ, ձեզի է իմ աղաղակս, իմ ռազմակոչս,
իմ հրաւէրս, իմ քարոզս ապատագոռ,
Ձեզի եմ անարև լեռներ, թառամած բլուրներ, ոս-
կորներու հովիտներ և կածաններ չուառու-
թեան,
Քեզի եմ պատմութիւն՝ արդարադատ կամ ստապա-
տիր, դիւցազներգակ կամ ստրկաբան,
Քեզի եմ տրամաթախիծ անցեալ, գերեզմանակերպ
յիշատակ և դուն վեհաշուք Ցեղ,
Կռիւներու վրիժազանկերն ահաւասի՛կ արհաւիրքով
և ժամ առ ժամ կը հնչեն...
Արթնցէ՛ք, հրապինուեցէ՛ք, յոյսով գերազօրուեցէ՛ք
և յուսահատութեան մուրձերովը հարուածե-
ցէ՛ք...
Եօթը դարերու մահացնող ճակատագիրը այսօր
մեր գարշապարներուն տակ կը փշրուի...
Ազատութեան մուրացկանները գերեզմաններուեցան
սա՛ անողորմ ըմբոստները ծնցնելու համար,

Եւ Դահիճները ասոնց առջև կը սարսռան ինչպէս թշնամին ասոնց առջև ծնրադիր է որ կ'ողեվարուի...

„Եւ դուք մտածումի վարպետներ, իմաստութեան մատեաններնիդ փոշիներուն յանձնեցէ՛ք,

Եւ ձգեցէ՛ք ձեր արժէքները, ձեր խորհուրդները, ձեր կանոնները և ձեր երազանքի սրահներէն դուրս ելէ՛ք,

Եւ լայնաձեռն ցանեցէ՛ք պայքարի հողին վրայ ինչ որ ունիք հերոսական, ինչ որ ունիք ազատաշունչ...

Եւ դուն միսթիք վեղարաւոր քու քառաթև խաչիդ երկու թևերը փշրելէն՝ գինուէ՛ անով,

Թշնամիդ և խոնարհութիւն հրամայող Աստծուդ առջևը ծառանալու համար...

Եւ դուն անթուելի թշուառութեան և անօրինակ տառապանքի տրտում ժողովուրդ,

Բոլորդ մէկտեղ դուրս նետուեցէ՛ք ամէ՛ն դուռէ, ամէ՛ն քաղաքէ, ամեն գիւղէ և ամեն աստղի տակէ,

Որովհետև ալ կը բաւէ՛ որչափ որ մեր թշնամին իր ափերովը—օ՜ դժոխային բաժակ—

Մերիններուն ազնուական արիւնը, մեր սեղանին առաջև նստած՝ գաղանաբար խմեց...

Ալ կը բաւէ որչափ որ անոնց պատրաստ դաշոյնները եկան մեր բերաններուն մէջ մխրճելու...

Ամէն սարկութեան, ամէն ծնրադրումի և, ամէն աղաչանքի մինչև մնուրն այլևս քամեցինք...



Օ՜, ալ կը բաւէ սեաթոռիչ ապառաներուն երկաթէ կոխնէը մեր ցաւոտ երդիքներուն վրայ,

Օ՜, ալ բաւէ՛ թո՛ղ ժանիքաւոր անգղերը քիչ մը ալ ուրիշ կուրծքեր կոցահարեն...

Թո՛ղ քիչ մը ալ թշնամիին արիւնը գայ մեր այգին ոռոգել և մեր սրունգները թրջել...

Թո՛ղ քիչ մը ալ մեր առաջև թշնամիին կմախքները դիզուին ի՜նչպէս արմատախիլ անտառներ...

„Թէև գիտեմ որ Աստուծեան Կոչմ ահաւոր է և ուժգին հրաւէրս ամենական,

Բայց եօթը դար է որ մայրագուեղ Հայրենիքը մեր յաղթական այցելութեանը կրսպասէ,

Եւ դեռ մտիկ ըրէ՛ք, ըմբոստ և Անվրէժ Տարօնն է որ իմ մէջէս կը գոռայ,

Աղիւնլուայ Վասպուրականին մահուան հոտը առհասարակ և մեխերի մրրիկներն Ակնայ հովիտներուն,

Ահաւասիկ ասպետական ձեռքը Կիլիկիոյ որ ձեզի կը մեկնի և ապառաժէ կուրծքը բարձրաբերձ Կարինին,

Ահաւասի՛կ հազարաւոր աւերակներու անէծքը Հայրենիքին պատգամին մէջ արիւնագծուած...

Եւ շունչիս մէջ մահամերձի հոնգիւն, նզովքի խօսքեր, պայքարի վճիռ և ապրելու անսահման սէր կայ...

Կոչիս մէջ Սերոբին խրախոյսը, Փարեանին ցաւը և Հրայրի հոգին կը ցոլան...

Եւ Վահանին և Վազարշակին և Թորգոմին և Եդուարդին վրէժները կը մնչեն...

Եւ վերջապէս ձայնիս մէջ ձայնը կայ, Հայրական ձայնը Մարգարէին, Նահատակին ձայնը, ձայնը հրաշագեղ Քրիստափորին"...

25
399
~~20-00~~
10-00

# ՀԱՅ ՅԵՂ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | | Ժ. ա. |
|---|---|---|
| 1. | **Ապստամբական ոգի** (սպառուած) | .10 |
| 2. | **Յեղափոխական կեանքից** (սպառ.) | .05 |
| 3. | **Գաղտնի տպարան** (սպառ.) | .05 |
| 4. | **Գիտական սոցիալիզմ.** Ֆ. ԷՆԳԵԼՍ (սպառ.) | .40 |
| 5. | **Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր.** (Դ. տպագր.) | — |
| 6. | **Սուկուենեան խմբի արշաւանքը.** (սպառ.) | .20 |
| 7. | **Կարճագոյ յիշատակին** (Զորս ծանուած) „ | .50 |
| 8. | **Հ. Յ. Դ. Երկրորդ բնդհ. ժողովի տեղեկագրութիւնը** | — |
| 9. | **Գրքիջներ,** Homo homini lupus. ՎԱՐԴԳԷՍ (սպառ.) | .20 |
| 10. | **Յրիտասարդներին.** Պ. ԿՐՈՊՈՏԿԻՆ. (սպառ.) | .20 |
| 11. | **Սգաստութեան ճանապարհին.** ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.) | .30 |
| 12. | „ „ „ Բ. „ | .60 |
| 13. | **Սամբոխային տրամաբանութիւն.** ԷԼԼԷՆԻ. (սպառ.) | .50 |
| 14. | **Սգաստութեան ճանապարհին.** ՂԱՐԻԲ. Գ. „ | .30 |
| 15. | **Հայաստան եւ Մակեդոնիա.** | .50 |
| 16. | **Սովկասեան վէրքեր.** Է. ԱԿՆՈՒՆԻ. | 3.00 |
| 17. | **Հայրենիքի գաղափարը.** Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառ.) | 1.00 |
| 18. | **Սոցիալիզմական կանոնները.** | — |
| 19. | **Դէպի կռիւ.** Է. ԱԿՆՈՒՆԻ. (Սովկաս՝ 1 ռուբլի, Ամերիկա՝ 1/2 դոլար). | 2.00 |
| 20. | **Յեղափոխականները.** Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառ.) | .20 |
| 21. | **Նախագիծ Սովկասեան գործունէութեան.** (Բ. տպ.) | — |
| 22. | Подвиги царизма. В. Араратскій. | .50 |
| 23. | **Les tueries de Bakou** A. ARAZI | .20 |
| 24. | **Յեղափոխական դաշն.** | .20 |
| 25. | **Հ. Յ. Դ. Երրորդ բնդհ. ժողովի տեղեկագրութիւնը.** | — |
| 26. | **Սոչ Մահմէտականներին** (բուրեբէն) | .10 |
| 27. | **Les Plaies du Caucase** E. AKNOUNI | 2.00 |
| 28. | **Սգաստութեան ճանապարհին.** ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ. | .40 |
| 29. | **Մեծ մարդասպանի դէմ** (Դատաւարութիւն) | .50 |
| 30. | **Վիրաւոր բազկեր.** ՎՏԱՐԱՆԴԻ. | .50 |
| 31. | **Յեղափոխական մտքեր.** Բ. ՄԵԲԱՅԷԼԵԱՆ (Մամ. տակ) | — |
| 32. | **Հայորդիներ.** ՍԻԱՄԱՆԹՕ. | .50 |

Դիմել՝ «Դրօշակի» խմբագրութեան, Ժընեվ։

Ազգային գրադարան
NL0357711

54976